ՏԵՂԵԿԱՆՔ

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
Խ-262-28.08.2019-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 05-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 305-րդ հոդվածում «գործարքն անվավեր է» բառերը փոխարինել «գործարքը վիճահարույց է» բառերով:

Հոդված 2.

Օրենսգրքի 970-րդ հոդվածի՝

1) Վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ.

«**Համալիր թույլտվության պայմանագրի ձևը և ~~արտոնագրային օրենսդրությամբ պահպանվող օբյեկտի օգտագործման վերաբերյալ համալիր թույլտվության պայմանագրից ծագող իրավունքների~~դրանից բխող իրավունքի գրանցումը**»,

2) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել,

3) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Համալիր թույլտվության պայմանագրով նախատեսված՝ իրավատիրոջը պատկանող բացառիկ իրավունքների համալիրը ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործելու իրավունք~~ներ~~ի տրամադրումը, ինչպես նաև այդ իրավունք~~ներ~~ի դադարումը ենթակա են գրանցման ~~արտոնագրերի ու ապրանքային նշանների գրանցում իրականացնող~~ լիազորված պետական մարմնում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Համալիր թույլտվության պայմանագրի կողմերը երրորդ անձանց հետ հարաբերություններում իրավունք ունեն պայմանագիրը վկայակոչել միայն դրանից ծագող իրավունք~~ներ~~ը սույն մասով նախատեսված կարգով գրանցելուց հետո: Գրանցման պահանջը չպահպանելու դեպքում համալիր թույլտվության պայմանագիրը համարվում է առ ոչինչ:»:

Հոդված 3.

Օրենսգրքի 973-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1) ապահովել համալիր թույլտվության պայմանագրից ծագող իրավունք~~ներ~~ի տրամադրման պետական գրանցումը (970-րդ հոդվածի 3-րդ մաս).»:

Հոդված 4.

Օրենսգրքի 978-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում «970 հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով» բառերը փոխարինել «970-րդ հոդվածի 3-րդ մասով» բառերով:

Հոդված 5.

Օրենսգրքի 979-րդ հոդվածի 2-րդ մասում «970 հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով» բառերը փոխարինել «970-րդ հոդվածի 3-րդ մասով» բառերով:

Հոդված 6.

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո 3 ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է համալիր թույլտվության պայմանագրով նախատեսված՝ իրավատիրոջը պատկանող բացառիկ իրավունքների համալիրը ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործելու իրավունք~~ներ~~ի տրամադրման, ինչպես նաև համալիր թույլտվության պայմանագրի լուծման պետական գրանցման կարգը: